ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ Ք. ԱՆԿԱՐԱ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Հայկ Մայիլյան, Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) Երևանի կենտրոնի գլխավոր տեսուչ:

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Թուրքիայի Հանրապետություն, ք. Անկարա, 2025 թվականի փետրվարի 3-7-ը:

3. Հրավիրող կողմը.

Եվրոպական հանձնաժողովի «Ավելի լավ ուսուցում ավելի անվտանգ սննդի համար (BTSF)» նախաձեռնություն:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

«Կենդանիների առողջություն» խորագրով տարածաշրջանային աշխատաժողովին մասնակցելու նպատակով:

5. Քննարկված թեմաները.

Դասախոսության թեմաներն են՝

1. ԵՄ Կենդանիների առողջության մասին օրենքը (2016/429), Կենդանիների առողջության վերաբերյալ ԵՄ մոտեցումը և քաղաքականությունը:
2. Կենդանիների առողջության կանոններ Եվրոպական միություն մուտք գործելու համար (AHL և CDR (EU) 2020/692):
3. Թուրքիայի Հանրապետության փորձը անասնաբուժական հիվանդությունների բռնկումների վերաբերյալ:
4. Հիվանդությունների վերաբերյալ իրազեկում և պատրաստվածություն, կենդանիների առողջության կանխարգելման և արտակարգ իրավիճակների պատրաստվածության կարևորությունը արդյունաբերության, անասնաբուժական իշխանությունների և բոլոր շահագրգիռ կողմերի համար:
5. Կենդանիների անդրսահմանային հիվանդությունների վաղ հայտնաբերում և հսկողություն:
6. Արտակարգ իրավիճակների պլանավորում Կենդանիների անդրսահմանային հիվանդությունների համար:
7. Հաղորդակցություն մայրուղիներ անասնաբուժական վարչություններում:
8. Կենդանիների պատվաստման մոտեցումները և ԵՄ օրենսդրությունը որոշ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման նպատակով անասնաբուժական դեղամիջոցների օգտագործման վերաբերյալ:
9. ԵՄ անդամ պետությունների փորձը թռչնագրիպի դեմ պատվաստումների օգտագործման վերաբերյալ:

10. Կենդանիների տեղաշարժերի վերահսկում և իրավական լիազորությունների սահմանում:
11. Կենդանիների շարժման սահմանափակումներ և հավաստագրում:
12. ԵՄ փորձը Կենդանիների հիվանդությունների գոտիավորման վերաբերյալ:
13. Մեկ առողջություն կոնտեքստում հանրային առողջության, կենդանիների առողջության և այլ ծառայությունների միջև համակարգման միջոցառումների իրականացում:

Գործնական դասընթացների թեմաներն են՝

14. Կենդանիների առողջության վիճակը և հիվանդությունների բռնկման դեմ կիրառվող պայքարի միջոցառումների ռազմավարությունը ներկայացող երկրում:
15. Հիվանդությունների վերահսկման ընթացակարգի մշակում:
16. Կենդանիների անդրսահմանային հիվանդությունների կասկածելի դեպքերի ահազանգում:
17. Հիվանդությունների վերահսկման միջոցառումների ձեռնարկում հիվանդությունների բռնկումների դեպքում:
18. Հիվանդության կասկած և հաստատում, որի շրջանակներում իրականացվել է այցելություն ոչխարաբուծական ֆերմա:
19. Պատվաստումների իրականացման ընթացակարգ:
20. Սահմանափակող տարածքների գոտիավորման իրականացում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Դասախոսության նյութերը ներկայացվել է ԵՄ պատվիրակության կողմից, իսկ գործնական դասերի ժամանակ կազմվում էին աշխատանքային խմբեր, որոնք լուծում էին հանձնարարված առաջադրանքները և սահիկաշարի տեսքով ներկայացնում աշխատաժողովի մասնակիցներին:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման ժամանակ պայմանավորվածություններ, ստորագրված փաստաթղթեր չեն եղել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ծրագիրը իր բովանդակությամբ նախատեսված է եղել իրականացնել ուսուցում, եղել են ոչ պաշտոնական քննարկումներ սննդամթերքի ներմուծման և արտահանման վերաբերյալ, այլ առաջարկներ չեն եղել:

Հայկ Մայիլյան 11. 02. 2025թ.